

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգի՝ ԵՀ պայմանագրի 251-րդ հոդվածում նշված ընթացակարգի ենթակա գործիքներով սահմանված՝ կիրարկող լիազորությունների իրականացման գործում Հանձնաժողովին օժանդակող կոմիտեներին վերաբերող դրույթների հարմարեցումը Խորհրդի թիվ 1999/468/ԵՀ որոշմանը

Պաշտոնական տեղեկագիր L 284 , 31.10.2003թ., էջեր. 0001 - 0053

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով Եվրոպական համայնքի հիմնադրման մասին պայմանագիրը և, մասնավորապես, դրա 40-րդ, 47-րդ, 55-րդ, 71-րդ, 80-րդ, 95-րդ, 137-րդ, 150-րդ, 152-րդ, 153-րդ, 155-րդ, 156-րդ, 175(1), 179-րդ, 285-րդ և 300(3) հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով Եվրոպական կոմիտեի եզրակացությունը(2),

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն (3),

Քանի որ

- 1) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշումը (4) փոխարինվեց թիվ 87/373/ԵՏՀ որոշմամբ (5),
- 2) թիվ 1999/468/ԵՀ որոշման մասին Խորհրդի և Հանձնաժողովի հայտարարության (6) համաձայն՝ Հանձնաժողովին իր կիրարկող լիազորությունների իրականացմանն օժանդակող կոմիտեներին վերաբերող դրույթները, որոնք նախատեսված են թիվ 87/373/ԵՏՀ որոշման կիրառմամբ, պետք է հարմարեցվեն թիվ 1999/468/ԵՀ որոշման 3-րդ, 4-րդ և 5-րդ հոդվածներին՝ վերջիններիս համապատասխանելու համար,
- 3) վերոնշյալ հայտարարության մեջ նշված են կոմիտեի ընթացակարգերի հարմարեցման եղանակները՝ մի ինքնաբերական գործընթաց՝ պայմանով, որ դա չազդի հիմնական ակտով նախատեսված կոմիտեի բնույթի վրա,
- 4) հարմարեցման ենթակա դրույթներով սահմանված ժամկետները պետք է շարունակեն ուժի մեջ մնալ: Այն դեպքում, երբ կոնկրետ որևէ ժամկետ սահմանված չէ կիրարկող միջոցների ընդունման համար, պետք է եռամսյա ժամկետ սահմանվի,
- 5) այն փաստաթղթերի դրույթները, որոնցով նախատեսվում է 87/373/ԵՏՀ որոշմամբ սահմանված կոմիտեի ընթացակարգի I տեսակի կիրառություն, պետք է հետևաբար փոխարինվեն թիվ 1999/468/ԵՀ որոշման 3-րդ հոդվածով սահմանված խորհրդատվական ընթացակարգին վերաբերող դրույթներով,
- 6) այն փաստաթղթերի դրույթները, որոնցով նախատեսվում է 87/373/ԵՏՀ որոշմամբ սահմանված կոմիտեի ընթացակարգի II(ա) և II(բ) տեսակների կիրառություն, պետք է փոխարինվեն թիվ 1999/468/ԵՀ որոշման 4-րդ հոդվածով նախատեսված կառավարման ընթացակարգին վերաբերող դրույթներով,
- 7) այն փաստաթղթերի դրույթները, որոնցով նախատեսվում է 87/373/ԵՏՀ որոշմամբ սահմանված կոմիտեի ընթացակարգի III(ա) և III(բ) տեսակների կիրառություն, պետք է փոխարինվեն թիվ 1999/468/ԵՀ որոշման 5-րդ հոդվածով նախատեսված կարգավորիչ ընթացակարգին վերաբերող դրույթներով,

8) սույն Կանոնակարգը վերաբերում է բացառապես կոմիտեի ընթացակարգերի համաձայնեցմանը: Այդ ընթացակարգերի հետ առնչվող կոմիտեների անվանումները, անհրաժեշտության դեպքում, փոփոխվել են,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

I հավելվածում նշված և խորհրդատվական ընթացակարգին ենթակա փաստաթղթերը, համաձայն այդ հավելվածի, հարմարեցվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման համապատասխան դրույթներին:

Հոդված 2

II հավելվածում նշված և կառավարման ընթացակարգին ենթակա փաստաթղթերը, համաձայն այդ հավելվածի, հարմարեցվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման համապատասխան դրույթներին:

Հոդված 3

III հավելվածում նշված և կարգավորիչ ընթացակարգին ենթակա փաստաթղթերը, համաձայն այդ հավելվածի, հարմարեցվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման համապատասխան դրույթներին:

Հոդված 4

I, II և III հավելվածներում նշված փաստաթղթերի դրույթներին կատարված հղումները դիտարկվում են որպես սույն Կանոնակարգի համաձայն հարմարեցված դրույթներին կատարված հղումներ:

Սույն Կանոնակարգում կոմիտեների նախկին անվանումներին կատարված հղումները դիտարկվում են որպես դրանց նոր անվանումներին կատարված հղումներ:

Հոդված 5

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում, 2003 թվականի սեպտեմբերի 29-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Նախագահ

Պ. Քոքս

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Գ. Ալեմաննո

1) ՊՏ C 75 E, 26.03.2002թ., էջ 385:

2) ՊՏ C 241, 07.10.2002թ., էջ 128:

3) Եվրոպական պառլամենտի 2003 թվականի սեպտեմբերի 2-ի եզրակացություն և Խորհրդի 2003 թվականի ապրիլի 14-ի որոշում (ՊՏ C 153 E, 01.07.2003թ., էջ. 1):

4) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

5) ՊՏ L 197, 18.07.1987թ., էջ 33:

6) ՊՏ C 203, 17.07.1999թ., էջ 1:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Խորհրդատվական ընթացակարգին ենթակա և թիվ 1999/468/ ԵՀ որոշման համապատասխան դրույթներին հարմարեցված փաստաթղթերի ցանկը՝ համաձայն ստորև ներկայացված փոփոխությունների՝

1) Խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 89/686/ԵՏՀ հրահանգ՝ «Անձնական պաշտպանիչ հանդերձանքին վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին»⁽¹⁾: 6(2) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

2. Հանձնաժողովին աջակցում է թիվ 98/37/ԵՀ հրահանգի⁽²⁾ 6(2) հոդվածի համաձայն ստեղծված Մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

Համաձայն սույն պարբերության մեջ նշված ընթացակարգի՝ այն կարող է ծանուցվել սույն Հրահանգի իրականացման և գործնական կիրառության արդյունքում առաջացած ցանկացած խնդրի մասին:

Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ⁽³⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

2) Խորհրդի 1990 թվականի հունիսի 20-ի 90/385/ԵՏՀ հրահանգ՝ «Իմպլանտի նպատակով օգտագործվող բժշկական սարքավորումներին վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին»⁽⁴⁾:6(2) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

2. Հանձնաժողովին աջակցում է մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

Կոմիտեն, համաձայն սույն պարբերության մեջ նշված ընթացակարգի, կարող է ծանուցվել սույն Հրահանգի իրականացման և գործնական կիրառության արդյունքում առաջացած ցանկացած խնդրի մասին:

Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ⁽⁵⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

- 3) Խորհրդի 1990 թվականի հունիսի 29-ի 90/377/ԵՏՀ հրահանգ՝ «Արդյունաբերող վերջնական սպառողներից գանձվող գազի և էլեկտրականության արժեքների թափանցիկության բարելավման նպատակով Համայնքի ընթացակարգի մասին»⁽⁶⁾: 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 7

1. Հանձնաժողովին, 6-րդ հոդվածում նշված փոփոխությունների ընդունման համար, աջակցում է կոմիտեն:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ⁽⁷⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

- 4) Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 3880/91 (ԵՏՀ) կանոնակարգ՝ «Ատլանտյան օվկիանոսի հյուսիսարևելյան մասում ձկնորսությամբ զբաղվող անդամ պետությունների կողմից որսի վերաբերյալ անվանական վիճակագրություն ներկայացնելու մասին»⁽⁸⁾: 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 5

1. Հանձնաժողովին աջակցում է Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽⁹⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

- 5) Խորհրդի 1992 թվականի հուլիսի 23-ի թիվ 2408/92 կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Համայնքի օդային փոխադրողների համար միջհամայնքային օդային երթուղիների հասանելիության մասին»⁽¹⁰⁾: 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 11

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Կոմիտեն 9-րդ և 10-րդ հոդվածների կիրառման մասին խորհրդատվություն է տրամադրում Հանձնաժողովին:

3. Հանձնաժողովը կարող է նաև սույն Կանոնակարգի կիրառմանը վերաբերող ցանկացած այլ խնդրի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրել Կոմիտեին:

4. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽¹¹⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

5. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

6) Խորհրդի 1993 թվականի հունիսի 14-ի թիվ 93/42/ԵՏՀ հրահանգ «Բժշկական սարքավորումների մասին»⁽¹²⁾: 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 6

Ստանդարտների և տեխնիկական կանոնակարգերի հարցերով կոմիտե

1. Հանձնաժողովին աջակցում է 83/189/ԵՏՀ հրահանգի 5-րդ հոդվածով ստեղծված կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽¹³⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

7) Խորհրդի 1993 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 93/704/ԵՀ որոշում՝ «Ճանապարհատրանսպորտային պատահարների վերաբերյալ Համայնքի տվյալների բազա ստեղծելու մասին»⁽¹⁴⁾: 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 5

1. Հանձնաժողովին աջակցում է Խորհրդի թիվ 89/382/ԵՏՀ , Եվրատոմ, որոշմամբ ստեղծված Վիճակագրական ծրագրերի կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽¹⁵⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

8) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի մարտի 23-ի թիվ 94/9/ԵՀ հրահանգ՝ «Պոտենցիալ պայթյունավտանգ միջավայրում կիրառության համար նախատեսված պաշտպանիչ համակարգերի և սարքավորումների վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» ⁽¹⁶⁾:6(3) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

3. Հանձնաժողովին աջակցում է մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽¹⁷⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

9) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի հունիսի 16-ի 94/25/ԵՀ հրահանգ՝ «Ժամանցային նավերին (նավակներին) վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի համապատասխանեցման մասին» ⁽¹⁸⁾:6(3) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

3. Հանձնաժողովին աջակցում է մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽¹⁹⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

10) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1995 թվականի հունիսի 29-ի թիվ 95/16/ԵՀ հրահանգ՝ «Վերելակներին վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի համապատասխանեցման մասին» ⁽²⁰⁾:6(3) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

3. Հանձնաժողովին աջակցում է մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽²¹⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

11) Խորհրդի 1996 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 96/67/ԵՀ հրահանգ՝ «Համայնքի օդանավակայաններում վերգետնյա սպասարկման ծառայությունների շուկայի հասանելիության մասին»⁽²²⁾: 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 10

Խորհրդատվական կոմիտեն

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Կոմիտեն 9-րդ հոդվածի կիրառման մասին խորհրդատվություն է տրամադրում Հանձնաժողովին :

3. Կոմիտեն կարող է նաև խորհրդատվություն տրամադրել սույն Հրահանգի կիրառմանը վերաբերող ցանկացած այլ խնդրի վերաբերյալ:

4. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽²³⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

5. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

12) Խորհրդի 1996 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 96/75/ԵՀ հրահանգ՝ «Համայնքում ազգային և միջազգային ներքին ջրուղիներով փոխադրումներ իրականացնելու համար նախատեսված փոխադրամիջոցի վարձակալման և գնային համակարգերի մասին»⁽²⁴⁾: 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 8

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 91/672/ԵՏՀ հրահանգով ստեղծված կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽²⁵⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

13) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1997 թվականի մայիսի 29-ի թիվ 97/23/ԵՀ հրահանգ՝ «Ճնշման տակ աշխատող սարքավորումների վերաբերյալ անդամ

պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» ⁽²⁶⁾: 7(2) և 7(3) հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

2. Հանձնաժողովին աջակցում է մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

Կոմիտեն կազմում է իր ընթացակարգային կանոնները:

3. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽²⁷⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

14) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի հոկտեմբերի 27-ի 98/79/ԵՀ հրահանգ՝ «Արհեստական պայմաններում ախտորոշման բժշկական սարքերի մասին» ⁽²⁸⁾: 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 6

Ստանդարտների և տեխնիկական կանոնակարգերի հարցերով կոմիտե

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 98/34/ԵՀ հրահանգի 5-րդ հոդվածով ստեղծված կոմիտեն, (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽²⁹⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

15) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1999 թվականի հունվարի 25-ի թիվ 283/1999/ԵՀ որոշում՝ «Հօգուտ սպառողների՝ Համայնքի միջոցառումների ընդհանուր շրջանակ ստեղծելու մասին» ⁽³⁰⁾: 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 9

1. 2(բ) և 2(գ) հոդվածներում նշված միջոցառումների և ծրագրերի ընտրության չափորոշիչները, ինչպես նաև այդ միջոցառումները և ծրագրերը սահմանելիս Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման ⁽³¹⁾ 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

3. Բացի դրանից՝ Հանձնաժողովը յուրաքանչյուր տարվա սկզբին Կոմիտեին 2(ա) հոդվածի համաձայն ֆինանսավորվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում:

4. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

16) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1999 թվականի մարտի 9-ի 1999/5/ԵՀ հրահանգ՝ «Ռադիո սարքերի և հեռահաղորդակցության վերջնակետային սարքավորումների ու դրանց համապատասխանության փոխադարձ ճանաչման մասին ⁽³²⁾:13-րդ և 14-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 13

Կոմիտեի կազմը

1. Հանձնաժողովին աջակցում է Հեռահաղորդակցության համապատասխանության գնահատման և շուկայի վերահսկողության կոմիտեն (ՀՀԳՇ), (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 14

Խորհրդատվական կոմիտեի ընթացակարգը

1. Կոմիտեի հետ խորհրդակցում են 5-րդ, 6(2), 7(4), 9(4) հոդվածներով և VII(5) հավելվածով կարգավորվող խնդիրների վերաբերյալ:

2. Հանձնաժողովը պարբերաբար խորհրդակցում է Կոմիտեի հետ՝ սույն Հրահանգի կիրառմանն առնչվող վերահսկողական խնդիրների մասին, և անհրաժեշտության դեպքում, դրանց վերաբերյալ ուղեցույցներ է հրատարակում:

3. Կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման ⁽³³⁾ 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

4. Հանձնաժողովը պարբերաբար խորհրդակցում է հեռահաղորդակցության ցանցերի մատակարարների, սպառողների և արտադրողների ներկայացուցիչների հետ: Այն Կոմիտեին կանոնավորապես տեղեկացնում է այդ խորհրդակցությունների արդյունքների մասին:

17) Խորհրդի 1999 թվականի մարտի 11-ի 1999/13/ԵՀ հրահանգ՝ «Որոշակի գործունեության մեջ և ձեռնարկություններում օրգանական լուծիչների օգտագործման հետևանքով ցնդող օրգանական միացությունների արտանետումները սահմանափակելու մասին» ⁽³⁴⁾:13-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 13

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽³⁵⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

18) Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի թիվ 1999/382/ԵՀ որոշում՝ «Համայնքի մասնագիտական վերապատրաստման գործողությունների ծրագրի երկրորդ՝ «Լեռնարդո դա Վինչի» փուլի հիմնադրման մասին» ⁽³⁶⁾:7(5) և 7(6) հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

5. Հանձնաժողովի ներկայացուցիչները Կոմիտեի հետ խորհրդակցում են սույն ծրագրի իրականացման հետ կապված մյուս բոլոր համապատասխան խնդիրների վերաբերյալ: Այդ դեպքում կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման ⁽³⁷⁾ 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

6. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

19) Թիվ 93/12/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի թիվ 1999/32/ԵՀ հրահանգ՝ «Որոշակի հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության նվազեցման մասին» ⁽³⁸⁾: 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 9

Խորհրդատվական կոմիտեն

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽³⁹⁾ որոշման 3-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

-
- 1) ՊՏ L 399, 30.12.1989թ., էջ 18: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 96/58/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ, L 236, 18.09.1996թ., էջ 44):
 - 2) OJ L 207, 23.07.1998թ., էջ 1: Թիվ 98/79/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 331, 07.12.1998թ., էջ 1):
 - 3) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 4) ՊՏ L 189, 20.07.1990թ., էջ 17: Վերջին անգամ թիվ 93/68/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 220, 30.08.1993թ., էջ 1):
 - 5) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 6) ՊՏ թիվ L 185, 17.07.1990թ., էջ 16: 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով վերջին անգամ փոփոխված հրահանգ:
 - 7) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 8) ՊՏ L 365, 31.12.1991թ., էջ 1: Հանձնաժողովի թիվ 1637/2001 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ, L 222, 17.08.2001թ., էջ 20):
 - 9) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 10) ՊՏ L 240, 24.08.1992թ., էջ 8: 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով վերջին անգամ փոփոխված կանոնակարգ:
 - 11) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 12) ՊՏ L 169, 12.07.1993թ., էջ 1: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2001/104/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ, L 6, 10.01.2002թ., էջ 50):
 - 13) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 14) ՊՏ L 329, 30.12.1993թ., էջ 63:

- 15) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝
Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 16) ՊՏ թիվ L 100, 19.04.1994թ., էջ 1:
- 17) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝
Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 18) ՊՏ L 164, 30.06.1994թ., էջ 15:
- 19) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝
Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 20) ՊՏ L 213, 07.09.1995թ., էջ 1:
- 21) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝
Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 22) ՊՏ L 272, 25.10.1996թ., էջ 36:
- 23) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝
Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 24) ՊՏ L 304, 27.11.1996թ., էջ 12:
- 25) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝
Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 26) ՊՏ L 181, 09.07.1997թ., էջ 1:
- 27) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝
Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 28) ՊՏ L 331, 07.12.1998թ., էջ 1:
- 29) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝
Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 30) ՊՏ L 34, 09.02.1999թ., էջ 1: Վերջին անգամ Հանձնաժողովի թիվ 2002/219/ԵՀ որոշմամբ փոփոխված
որոշում (ՊՏ L 72, 14.03.2002թ., էջ 27):
- 31) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝
Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 32) ՊՏ L 91, 07.04.1999թ., էջ 10:
- 33) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը
սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):

34) ՊՏ L 85, 23.03.1999թ., էջ 1:

35) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):

36) ՊՏ L 146, 11.06.1999թ., էջ 33:

37) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):

38) ՊՏ L 121, 11.05.1999թ., էջ 13:

39) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):

ՀԱՎԵԼՎԱԾ II

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Կառավարման ընթացակարգին ենթակա և թիվ 1999/468/ ԵՀ որոշման համապատասխան դրույթներին հարմարեցված փաստաթղթերի ցանկը՝ համաձայն ստորև ներկայացված փոփոխությունների՝

- 1) Խորհրդի 1988 թվականի փետրվարի 29-ի թիվ 571/88/ԵՏՀ կանոնակարգ՝ «Գյուղատնտեսական հողինգների կառուցվածքի վերաբերյալ 1988–1997 թվականներին Համայնքի կողմից իրականացվող ուսումնասիրության կազմակերպման մասին» (!):15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 15

1. Հանձնաժողովին աջակցում է Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (2) որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

- 2) Խորհրդի 1989 թվականի փետրվարի 13-ի 89/130/ԵՏՀ, Եվրատոմ, հրահանգ, «Շուկայական գներով հաշվարկված համախառն ազգային արդյունքի վերաբերյալ վիճակագրության հավաքման ներդաշնակեցման մասին» (2): 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 6

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (4) որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

3) Խորհրդի 1989 թվականի մայիսի 29-ի թիվ 1576/89 կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Սպիտային խմիչքները սահմանելու, նկարագրելու և ներկայացնելու ընդհանուր կանոնները սահմանելու մասին» ⁽⁵⁾:13-րդ և 14-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 13

1. Սույնով ստեղծվում է Սպիտային խմիչքների հարցերով կիրարկող կոմիտե (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 14

1. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽⁶⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

4) Խորհրդի 1990 թվականի հունիսի 11-ի թիվ 1588/90/ ԵՏՀ, Եվրատոմ, կանոնակարգ Եվրոպական համայնքների վիճակագրական գրասենյակին վիճակագրական գաղտնիության ենթակա տվյալների փոխանցման մասին ⁽⁷⁾: 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 7

1. Սույնով ստեղծվում է Վիճակագրական գաղտնիության հարցերով կոմիտե (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽⁸⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածում նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

5) Խորհրդի 1990 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 3037/90/ԵՏՀ կանոնակարգ՝ «Եվրոպական համայնքում տնտեսական գործունեության վիճակագրական դասակարգման մասին» ⁽⁹⁾: 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 9

1. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽¹⁰⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածում նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

2. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

6) Խորհրդի 1991 թվականի հունիսի 10-ի թիվ 1601/91 կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Բուրավետացված գինիների, գինի պարունակող բուրավետացված խմիչքների և գինուց պատրաստված բուրավետացված կոկտեյլների սահմանման, բնութագրման և արտաքին տեսքի ձևավորման մասին» ⁽¹¹⁾: 12-րդ և 13-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 12

1. Սույնով ստեղծվում է սույն Կանոնակարգում նշված՝ խմիչքների հարցերով Կիրարկող կոմիտե (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 13

Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽¹²⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

7) Խորհրդի 1991 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 3330/91 կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Անդամ պետությունների միջև իրականացվող ապրանքների առևտրին վերաբերող վիճակագրության մասին» ⁽¹³⁾: 30-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 30

1. Հանձնաժողովին աջակցում է անդամ պետությունների միջև իրականացվող ապրանքների առևտրին վերաբերող վիճակագրության հարցերով Կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ դրույթներն ընդունվում են 3-րդ պարբերությամբ սահմանված ընթացակարգին համապատասխան:

3. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (¹⁴) որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

8) Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 3924/91 կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Արդյունաբերական արտադրանքի վերաբերյալ Համայնքի կողմից իրականացվող ուսումնասիրություն նախատեսելու մասին» (¹⁵): 9-րդ և 10-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 9

Կոմիտեն

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 89/382/ԵՏՀ, Եվրատոմ, որոշմամբ ստեղծված Վիճակագրական ծրագրերի կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Սույն Կանոնակարգի իրականացման համար նախատեսված ընթացակարգերը, այդ թվում նաև տվյալների հավաքման և արդյունքների մշակման վերաբերյալ տեխնիկական առաջընթացին համապատասխանեցման միջոցները, սահմանվում են Հանձնաժողովի կողմից՝ 10-րդ հոդվածում սահմանված ընթացակարգի համաձայն:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 10

Ընթացակարգը

Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (¹⁶) որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածում նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

- 9) Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 91/692/ԵՏՀ հրահանգ՝ «Շրջակա միջավայրին վերաբերող որոշ հրահանգների կիրարկմանն առնչվող ստանդարտացման և ռացիոնալիզացման մասին»⁽¹⁷⁾: 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 6

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽¹⁸⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

- 10) Խորհրդի 1992թ. հունիսի 18-ի թիվ 92/51/ԵՏՀ հրահանգ՝ «Մասնագիտական կրթության և վերապատրաստման ճանաչման երկրորդ ընդհանուր համակարգի մասին», որով լրացումներ են կատարվել 89/48/ԵՏՀ հրահանգում⁽¹⁹⁾: 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 15

1. Գ և Դ հավելվածներում սահմանված կրթական և վերապատրաստման դասընթացների ցանկը կարող է փոփոխվել Հանձնաժողովի հետ առնչվող՝ ցանկացած անդամ պետության կողմից ներկայացված հիմնավորված պահանջի հիման վրա: Պահանջագրին կից ներկայացվում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները և, մասնավորապես, ազգային իրավունքի համապատասխան դրույթների տեքստերը: Պահանջ ներկայացնող անդամ պետությունն այդ մասին տեղեկացնում է նաև մյուս անդամ պետությանը:

2. Հանձնաժողովն ուսումնասիրում է տվյալ, ինչպես նաև այլ անդամ պետություններում պահանջվող կրթական և վերապատրաստման դասընթացները: Հանձնաժողովը ստուգում է, մասնավորապես՝ արդյոք տվյալ դասընթացի արդյունքում ստացված որակավորումը համապատասխանում է այն տիրապետողին՝

- մասնագիտական կրթության կամ վերապատրաստման համեմատաբար բարձր մակարդակի դեպքում՝ 1(ա) հոդվածի առաջին ենթապարբերության երկրորդ պարբերությի (I) կետում նշված՝ հետմիջնակարգ դասընթաց անցնելու փաստը և
- պատասխանատվության ու գործունեության միևնույն մակարդակի առկայությունը:

3. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

4. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (20) որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երկու ամիս:

5. Հանձնաժողովը համապատասխան անդամ պետությանը պետք է տեղեկացնի որոշման մասին և, անհրաժեշտության դեպքում, հրապարակի Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրի փոփոխված ցանկը:

6. Վերը սահմանված ընթացակարգի հիման վրա՝ Գ և Դ հավելվածներում նշված կրթական ու վերապատրաստման դասընթացների հետ կատարված փոփոխություններն անմիջապես կիրառվում են Հանձնաժողովի կողմից սահմանված օրը:

11) Խորհրդի 1992 թ. դեկտեմբերի 14-ի թիվ 92/109/ԵՏՀ հրահանգ՝ «Թմրանյութերի և հոգեմետ նյութերի ապօրինի արտադրության մեջ օգտագործվող որոշ նյութերի արտադրության ու շուկա դուրսբերման մասին» (21): 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 10

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 3677/90/ կանոնակարգի (ԵՏՀ) 10-րդ հոդվածով ստեղծված կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

Կոմիտեն ուսումնասիրում է սույն Հրահանգի կիրառմանը վերաբերող ցանկացած խնդիր:

Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽²²⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածում նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. 2-րդ պարբերության մեջ սահմանված ընթացակարգին հաջորդում է մասնավորապես հետևյալը՝

ա) անհրաժեշտության դեպքում, 2-րդ հոդվածով նախատեսված կարգով՝ I հավելվածի 2-րդ կատեգորիայում նշված նյութերի խառնուրդների և պատրաստուկների մակնշման ու փաստաթղթավորման հետ կապված պայմանների որոշում.

բ) սույն Հրահանգի հավելվածների փոփոխություն՝ Միավորված ազգերի կազմակերպության Կոնվենցիայի հավելվածի աղյուսակներում կատարված փոփոխությունների դեպքում.

գ) II հավելվածում նշված սահմանաչափերի փոփոխություն:

12) Խորհրդի 1993 թվականի մարտի 15-ի թիվ 696/93/կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Համայնքում արտադրական համակարգի ուսումնասիրության և վերլուծության վիճակագրական միավորների մասին»⁽²³⁾: 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 7

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 89/382/ԵՏՀ.Եվրատոմ, որոշմամբ ստեղծված Վիճակագրական ծրագրերի կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽²⁴⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածում նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

13) Խորհրդի 1993 թվականի ապրիլի 5-ի թիվ 93/15/ԵՏՀ հրահանգ՝ «Քաղաքացիական օգտագործման համար նախատեսված պայթուցիկ նյութերի շուկայահանման և վերահսկման վերաբերյալ դրույթների ներդաշնակեցման մասին» ⁽²⁵⁾: 13-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 13

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

Կոմիտեն ուսումնասիրում է սույն Հրահանգի կիրառմանը վերաբերող ցանկացած խնդիր:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽²⁶⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածում նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

4. 2-րդ պարբերությամբ սահմանված ընթացակարգը կիրառվում է, մասնավորապես՝ հետագայում Միավորված ազգերի կազմակերպության առաջարկություններում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու նպատակով:

14) Բժիշկների ազատ տեղաշարժին և նրանց դիպլոմների, վկայագրերի ու ֆորմալ կրթության այլ ապացույցների փոխադարձ ճանաչմանը նպաստող՝ Խորհրդի 1993 թվականի ապրիլի 5-ի 93/16/ԵՏՀ հրահանգ⁽²⁷⁾:44ա(3) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

3. Կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման⁽²⁸⁾ 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով այդ որոշման 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երկու ամիս:

4. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

15) Խորհրդի 1993 թվականի հուլիսի 22-ի թիվ 2186/93/ԵՏՀ կանոնակարգ՝ «Համայնքի կողմից վիճակագրական նպատակներով բիզնես ռեգիստրների կազմումը համակարգելու մասին»⁽²⁹⁾: 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 9

Ընթացակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է Խորհրդի թիվ 89/382/ԵՏՀ, Եվրատոմ, որոշմամբ ստեղծված Վիճակագրական ծրագրերի կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽³⁰⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածում նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

16) Խորհրդի 1993 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 3696/93/կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Եվրոպական տնտեսական համայնքում արտադրանքների՝ ըստ գործունեության տեսակի վիճակագրական դասակարգման մասին» (CPA) (ԳՎՃ)⁽³¹⁾: 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 6

1. Այն դեպքում, երբ հղում է կատարվում հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽³²⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածում նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

2. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

17) Խորհրդի 1995 թվականի մայիսի 22-ի թիվ 1172/95 կանոնակարգ (ԵՀ)՝ «Համայնքի և դրա անդամ պետությունների կողմից ոչ անդամ պետությունների հետ իրականացվող ապրանքների առևտրին վերաբերող վիճակագրության մասին»⁽³³⁾: 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 21

1. Սույն Կանոնակարգի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են 2-րդ պարբերությամբ սահմանված ընթացակարգի համաձայն:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽³⁴⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

18) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24–ի 95/46/ԵՀ հրահանգ՝ «Անձնական տվյալների մշակման մասով անհատների պաշտպանության և այդ տվյալների ազատ տեղաշարժի մասին» ⁽³⁵⁾: 31–րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 31

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽³⁶⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8–րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածում նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

19) Խորհրդի 1995 թվականի նոյեմբերի 23–ի 95/57/ԵՀ հրահանգ՝ «Զբոսաշրջության ոլորտում վիճակագրական տվյալների հավաքագրման մասին» ⁽³⁷⁾: 12–րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 12

1. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽³⁸⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8–րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածում նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

2. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

20) Խորհրդի 1995 թվականի դեկտեմբերի 8-ի 95/64/ԵՀ հրահանգ՝ «Ապրանքների և ուղևորների՝ ծովով փոխադրման վերաբերյալ վիճակագրական տվյալների մասին» ⁽³⁸⁾: 13–րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 13

1. Հանձնաժողովին աջակցում է Խորհրդի թիվ 89/382/ԵՏՀ, Եվրատոմ, որոշմամբ ստեղծված Վիճակագրական ծրագրերի կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽⁴⁰⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8–րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածում նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

- 21) Խորհրդի 1996 թվականի հուլիսի 23-ի 96/50/ԵՀ հրահանգ՝ «Համայնքում ներքին ջրուղիներով ապրանքների և ուղևորների փոխադրման համար նավապետին տրամադրվող ազգային վկայականների ստացման պայմանների ներդաշնակեցման մասին»⁽⁴¹⁾: 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 12

1. Հանձնաժողովի կողմից 11-րդ հոդվածի կիրառմանն աջակցում է 91/672/ԵՏՀ հրահանգի 7-րդ հոդվածով ստեղծված կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽⁴²⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

- 22) Խորհրդի 1996 թվականի ապրիլի 22-ի թիվ 788/96 կանոնակարգ (ԵՀ)՝ «Անդամ պետությունների կողմից ակվակուլտուրային արտադրության վերաբերյալ վիճակագրություն տրամադրելու մասին»⁽⁴³⁾: 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 7

1. Հանձնաժողովին աջակցում է Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽⁴⁴⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երկու ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

23) Խորհրդի 1996 թվականի հունիսի 20-ի թիվ 1257/96 կանոնակարգ (ԵՀ)՝ «Մարդասիրական օգնության մասին» ⁽⁴⁵⁾:17(3) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽⁴⁶⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

24) Խորհրդի 1996 թվականի հունիսի 27-ի թիվ 1292/96 կանոնակարգ (ԵՀ)՝ «Սննդօգնության քաղաքականության և սննդօգնության կառավարման ու սննդի անվտանգությանը նպաստող հատուկ գործողությունների մասին»⁽⁴⁷⁾: 27-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 27

Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽⁴⁸⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երկու ամիս:

25) Խորհրդի 1997 թվականի փետրվարի 17-ի թիվ 322/97 կանոնակարգ (ԵՀ)՝ «Համայնքի վիճակագրության մասին» ⁽⁴⁹⁾:20(2) և 20(3) հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

2. Կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման ⁽⁵⁰⁾ 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածում նշված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

26) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի փետրվարի 16-ի 98/8/ԵՀ հրահանգ՝ «Բիոցիդների շուկայահանման մասին» ⁽⁵⁰⁾:28(1) և 28(2) հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

1. Հանձնաժողովին աջակցում է Բիոցիդների հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

Մշտական կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

2. 4-րդ, 11(3), 15-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 27(1)(բ), 29-րդ և 33-րդ հոդվածների ուժով Մշտական կոմիտեին վերագրված խնդիրների և III Ա ու III Բ հավելվածներով, ինչպես նաև հարկ եղած դեպքում՝ IV Ա և IV Բ հավելվածներով պահանջվող հատուկ տվյալների հավաքագրման համար՝ ըստ V հավելվածում նշված արտադրատեսակների, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման ⁽⁵²⁾ 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

27) Խորհրդի 1998 թվականի մայիսի 25-ի թիվ 1172/98/ կանոնակարգ (ԵՀ)՝ «Ավտոճանապարհով ապրանքների փոխադրման վերաբերյալ վիճակագրական տվյալների մասին» ⁽⁵³⁾:10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 10

1. Հանձնաժողովին աջակցում է Վիճակագրական ծրագրերի կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽⁵⁴⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

28) Խորհրդի 1998 թվականի հուլիսի 17-ի թիվ 1658/98 կանոնակարգ (ԵՀ) «Եվրոպական հասարակական զարգացման կազմակերպությունների (ՀԿ-ների) հետ զարգացող երկրների շահերից բխող՝ համաֆինանսավորման գործառույթների մասին» ⁽⁵⁵⁾:ա) 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 8

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽⁵⁶⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

բ) 9-րդ և 10-րդ հոդվածները հանվում են, իսկ այդ հոդվածներին կատարված հղումները հասկացվում են որպես 8-րդ հոդվածին կատարված հղում:

29) Խորհրդի 1998 թվականի նոյեմբերի 3-ի 98/83/ԵՀ հրահանգ՝ «Մարդկանց կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին»⁽⁵⁷⁾: 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 12

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽⁵⁸⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

30) Խորհրդի 1998 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 2836/98 կանոնակարգ (ԵՀ)՝ «Զարգացմանն ուղղված համագործակցության մեջ գենդերային հարցերի ներգրավման մասին»⁽⁵⁹⁾: 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 8

1. Հանձնաժողովին աջակցում է Զարգացման համար իրավասու՝ աշխարհագրական հարցերով համապատասխան կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ⁽⁶⁰⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

31) Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի թիվ 1999/382/ԵՀ որոշում՝ «Համայնքի մասնագիտական վերապատրաստման գործողությունների ծրագրի երկրորդ՝ «Լեոնարդո դա Վինչի» փուլի հիմնադրման մասին» ⁽⁶¹⁾:7(1) և 7(3) հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

3. 2-րդ պարբերության մեջ նշված կետերի առնչությամբ կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երկու ամիս:

32) Խորհրդի 1999 թվականի ապրիլի 26-ի թիվ 1999/297/ԵՀ որոշում՝ «Տեսալսողական և հարակից ոլորտների արտադրանքի արդյունաբերության ու շուկայի վերաբերյալ Համայնքի վիճակագրական տվյալների ենթակառուցվածքի սահմանման մասին» ⁽⁶²⁾: 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 4

1. Հանձնաժողովին աջակցում է Վիճակագրական ծրագրերի կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ⁽⁶³⁾ որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

-
- 1) ՊՏ L 56, 02.03.1988թ., էջ 1: Վերջին անգամ Հանձնաժողովի թիվ 143/2002 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 24, 26.01.2002թ., էջ 16):
 - 2) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 3) ՊՏ L 49, 21.02.1989թ., էջ 26:
 - 4) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 5) ՊՏ L 160, 12.06.1989թ., էջ 1: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 3378/94 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ, L 366, 31.12.1994թ., էջ 1):
 - 6) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 7) ՊՏ L 151, 15.06.1990 թ., էջ 1: Թիվ 322/97 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 52, 22.02.1997 թ., էջ 1):
 - 8) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 9) ՊՏ L 293, 24.10.1990թ., էջ 1: Վերջին անգամ Հանձնաժողովի թիվ 29/2002 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 6, 10.01.2002թ., էջ 3):
 - 10) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 11) ՊՏ L 149, 14.06.1991թ., էջ 1: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 2061/96 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ, L 277, 30.10.1996թ., էջ 1):
 - 12) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 13) ՊՏ L 316, 16.11.1991թ., էջ 1: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1624/2000 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ, L 187, 26.07.2000թ., էջ 1):
 - 14) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
 - 15) ՊՏ L 374, 31.12.1991թ., էջ 1: Վերջին անգամ 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված կանոնակարգ:

- 16) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 17) ՊՏ L 377, 31.12.1991թ., էջ 48:
- 18) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 19) ՊՏ L 209, 24.07.1992թ., էջ 25: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001/19/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ, L 206, 31.07.2001թ., էջ 1):
- 20) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 21) ՊՏ L 370, 19.12.1992թ., էջ 76: Վերջին անգամ Հանձնաժողովի 2001/8/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 39, 09.02.2001թ., էջ 31):
- 22) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 23) ՊՏ L 76, 30.03.1993թ., էջ 1: 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով վերջին անգամ փոփոխված կանոնակարգ:
- 24) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 25) ՊՏ L 121, 15.05.1993թ., էջ 20:
- 26) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 27) ՊՏ L 165, 07.07.1993թ., էջ 1: Վերջին անգամ 2001/19/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ:
- 28) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 29) ՊՏ L 196, 05.08.1993թ., էջ 1: Վերջին անգամ 1994 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված կանոնակարգ:
- 30) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 31) ՊՏ L 342, 31.12.1993թ., էջ 1: Վերջին անգամ Հանձնաժողովի թիվ 204/2002 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 36, 06.02.2002թ., էջ 1):

- 32) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 33) ՊՏ L 118, 25.05.1995թ., էջ 10:Թիվ 374/98 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 48, 19.02.1999 թ., էջ 6):
- 34) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 35) ՊՏ L 281, 23.11.1995թ., էջ 31:
- 36) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 37) ՊՏ L 291, 06.12.1995թ., էջ 32:
- 38) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 39) ՊՏ L 320, 30.12.1995թ., էջ 25: Վերջին անգամ Հանձնաժողովի 2000/363/ԵՀ որոշմամբ փոփոխված հրահանգ (ՊՏ L 132, 05.06.2000թ., էջ 1):
- 40) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 41) ՊՏ L 235, 17.09.1996թ., էջ 31:
- 42) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 43) ՊՏ L 108, 01.05.1996թ., էջ 1:
- 44) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 45) ՊՏ L 163, 02.07.1996թ., էջ 1:
- 46) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 47) ՊՏ L 166, 05.07.1996թ., էջ 1: Վերջին անգամ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 1726/2001 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ, L 234, 01.09.2001թ., էջ 10):
- 48) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):
- 49) ՊՏ L 52, 22.02.1997թ., էջ 1:

50) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):

51) ՊՏ L 123, 24.04.1998թ., էջ 1:

52) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):

53) ՊՏ L 163, 06.06.1998թ., էջ 1: Հանձնաժողովի թիվ 2691/1999 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 326, 18.12.1999թ., էջ 39):

54) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):

55) ՊՏ L 213, 30.07.1998թ., էջ 1:

56) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):

57) ՊՏ L 330, 05.12.1998թ., էջ 32:

58) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):

59) ՊՏ L 354, 30.12.1998թ., էջ 5:

60) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):

61) ՊՏ L 146, 11.06.1999թ., էջ 33:

62) ՊՏ L 117, 05.05.1999թ., էջ 39:

63) Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):

ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Կարգավորիչ ընթացակարգին ենթակա և ստորև նշված փոփոխությունների համաձայն՝ 1999/468/ԵՀ որոշման համապատասխան դրույթներին հարմարեցված փաստաթղթերի ցանկը՝

1) Խորհրդի 1975 թվականի հուլիսի 75/442/ԵՏՀ հրահանգ՝ «Թափոնների մասին»: 18-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 18

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (2) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

2) Խորհրդի 1979 թվականի մարտի 5-ի 79/267/ԵՏՀ առաջին հրահանգ՝ «Կյանքի ուղղակի ապահովագրության գործունեության նախաձեռնմանը և իրականացմանը վերաբերող օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի համաձայնեցման մասին»(3):32բ(6) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

6. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ (4) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

3) Խորհրդի 1979 թվականի փետրվարի 5-ի թիվ 357/79 կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Խաղողի տնկիների աճեցման համար նախատեսված տարածքների վիճակագրական հետազոտությունների մասին»(5):8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 8

1. Հանձնաժողովին աջակցում է Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (6) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

4) Խորհրդի 1980 թվականի հուլիսի 15-ի 80/777/ԵՏՀ հրահանգ՝ «Բնական հանքային ջրերի արդյունահանման և շուկայահանման վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» (7):12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 12

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (8) կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (9) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

5) Խորհրդի 1982 թվականի հունիսի 30-ի 82/471/ԵՏՀ հրահանգ «Կենդանիների կերակրման համար օգտագործվող որոշ ապրանքների մասին»(10):13-րդ և 14-րդ հոդվածները շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

Հոդված 13

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (11) կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (12) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

Հոդված 14

Այն դեպքում, երբ հղում է կատարվում հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 օր:

6) Խորհրդի 1985 թվականի դեկտեմբերի 20-ի 85/591/ԵՏՀ հրահանգ՝ «Մարդու կողմից սպառման համար նախատեսված սննդամթերքի դիտանցման համար Համայնքի նմուշառման և անալիզի մեթոդների ներմուծման մասին» (13):4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 4

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (14) կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (15) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

7) Խորհրդի 1985 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 3821/85 (ԵՏՀ) կանոնակարգ «Ավտոճանապարհային տրանսպորտում ձայնագրող սարքերի մասին»:18-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 18

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (17) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

8) Խորհրդի 1988 թվականի հունիսի 9-ի 88/320/ԵՏՀ հրահանգ՝ «Պատշաճ լաբորատոր գործունեության (ՊԼԳ) ստուգման և հաստատման մասին» (18):18-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 8

1. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (19) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

2. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

9) Խորհրդի 1988 թվականի հունիսի 13-ի 88/344/ԵՏՀ հրահանգ՝ «Սննդամթերքի և սննդի բաղադրիչների արտադրության մեջ օգտագործվող էքստրակցիոն լուծույթների մասին» (20): 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 6

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (21) կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (22) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

10) Խորհրդի 1988 թվականի հունիսի 22-ի 88/388/ԵՏՀ հրահանգ՝ «Սննդամթերքի մեջ համային հավելումների օգտագործմանը և դրանց արտադրության առաջնային նյութերին վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» (23): 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 10

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (24) կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (25) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

11) Խորհրդի 1988 թվականի դեկտեմբերի 21-ի 89/106/ԵՏՀ հրահանգ՝ «Շինարարական արտադրանքին վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի և վարչական ակտերի համապատասխանեցման մասին» (26):20(3) և (4) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

3. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (27) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

4. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

12) Խորհրդի 1988 թվականի դեկտեմբերի 21-ի 89/107/ԵՏՀ հրահանգ՝ «Մարդու կողմից սպառման համար նախատեսված սննդամթերքի մեջ օգտագործման համար թույլատրված սննդային հավելումներին վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» (28): 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 11

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (29) կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (30) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

13) Խորհրդի 1988 թվականի դեկտեմբերի 21-ի 89/108/ԵՏՀ հրահանգ՝ «Մարդու կողմից սպառման համար նախատեսված արագ սառեցրած սննդամթերքին վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» (31): 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 12

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (32) կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (33) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

14) Խորհրդի 1988 թվականի դեկտեմբերի 21-ի 89/109/ԵՏՀ հրահանգ՝ «Մենդամթերքի հետ շփման մեջ մտնող նյութերին և առարկաներին վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» (34):9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 9

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (35) կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Մենդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (36) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

15) Խորհրդի 1988 թվականի դեկտեմբերի 21-ի 89/398/ԵՏՀ հրահանգ՝ «Կոնկրետ կերակրման նպատակների համար նախատեսված սննդամթերքին վերաբերող անդամ պետությունների օրենքների համապատասխանեցման մասին» (37):13-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 13

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (38) (ԵՀ) կանոնակարգի 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Մենդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (39) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

16) Խորհրդի 1989 թվականի մայիսի 29-ի թիվ 1576/89 կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Սպիրտային խմիչքները սահմանելու, նկարագրելու և ներկայացնելու ընդհանուր կանոնները սահմանելու մասին» (40):15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 15

Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

17) Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգ՝ «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավմանն ուղղված միջոցների ներմուծման մասին» (41):17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 17

1. 16(1) հոդվածով նախատեսված՝ առանձին հրահանգներում տեխնիկական ճշգրտումներ կատարելու համար, հաշվի առնելով

- հրահանգների ընդունումը՝ տեխնիկական ներդաշնակեցման և ստանդարտացման ոլորտում և (կամ)
- տեխնիկական առաջընթացը, միջազգային կանոնակարգերում կամ տեխնիկական պայմաններում կատարված փոփոխությունները և նոր արդյունքները:

Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

18) Խորհրդի 1990 թվականի մարտի 26-ի թիվ 837/90 կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Հացահատիկային մշակաբույսերի արտադրության վերաբերյալ անդամ պետությունների կողմից տրամադրվող վիճակագրական տեղեկությունների մասին»(43):11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 11

1. Հանձնաժողովին աջակցում է Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):
2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (44) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:
3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

19) Խորհրդի 1990 թվականի ապրիլի 23-ի 90/219/ԵՏՀ հրահանգ՝ «Գենետիկորեն փոփոխված միկրոօրգանիզմների սահմանափակ օգտագործման մասին» (45):21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 21

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:
2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (46) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:
3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

20) Խորհրդի 1990 թվականի սեպտեմբերի 24-ի 90/496/ԵՏՀ հրահանգ՝ «Սննդամթերքի սննդային արժեքների վերաբերյալ տվյալների մասին»(47): 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 10

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (48) (ԵՀ) կանոնակարգի 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (49) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

21) Խորհրդի 1991 թվականի մայիսի 21-ի 91/271/ԵՏՀ հրահանգ՝ «Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին»(50): 18-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 18

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (51) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

22) Խորհրդի 1991 թվականի մայիսի 21-ի թիվ 1382/91 կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Անդամ պետություններում ձկնաբուծական արտադրանքի բեռնաթափման վերաբերյալ տվյալները տրամադրելու մասին» (52): 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 6

1. Հանձնաժողովին աջակցում է գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (53) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

23) Խորհրդի 1991 թվականի հունիսի 10-ի թիվ 1601/91 (ԵՏՀ) կանոնակարգ՝ «Բուրավետացված գինիների, գինի պարունակող բուրավետացված խմիչքների և գինուց պատրաստված բուրավետացված կոկտեյլները սահմանելու, բնութագրելու և ներկայացնելու մասին» (54):14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 14

Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (55) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

24) Խորհրդի 1991 թվականի հուլիսի 29-ի 91/439/ԵՏՀ հրահանգ՝ «Վարորդական վկայականների մասին» (56):7բ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 7բ

1. Հանձնաժողովին աջակցում է Վարորդական վկայականների հարցերով կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (57) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

25) Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 12-ի 91/676/ԵՏՀ հրահանգ՝ «Գյուղատնտեսական աղբյուրներից նիտրատներով աղտոտումից ջրերի պաշտպանության մասին» (58):9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 9

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (59) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

26) Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 16-ի 91/672/ԵՏՀ հրահանգ՝ «Ներքին ջրուղիներով ապրանքների և ուղևորների փոխադրման համար նավապետին տրամադրվող ազգային վկայականների փոխադարձ ճանաչման մասին» (60):7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 7

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (61) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

27) Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 19-ի 91/675/ԵՏՀ հրահանգ՝ «Ապահովագրության հարցերով կոմիտեի ստեղծման մասին»:1-ին և 2-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 1

Հանձնաժողովին աջակցում է Ապահովագրության հարցերով կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

Հոդված 2

1. Եթե Խորհուրդը «ոչ կյանքի» ուղղակի ապահովագրության և ուղղակի կյանքի ապահովության ոլորտում ընդունելիք ակտերում Հանձնաժողովին վերապահում է իր

կողմից սահմանվող կանոնների կիրարկման լիազորություններ, ապա կիրառվում է 2-րդ պարբերության մեջ սահմանված ընթացակարգը:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (63) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

28) Խորհրդի 1991 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 3925/91 կանոնակարգ՝ «Ներհամայնքային թռիչքի կամ ծովային նավագնացություն իրականացնող ուղևորների ուղևորախցիկի և ձեռքի ուղեբեռի նկատմամբ կիրառվող մաքսային հսկողությունն ու ձևակերպումները վերացնելու մասին»(64):

ա) 6(2) հոդվածը հանել:

բ) 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 8

1. Սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ դրույթներն ընդունվում են 2-րդ պարբերության մեջ սահմանված ընթացակարգին համապատասխան:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (65) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

29) Խորհրդի 1992 թվականի մարտի 31-ի 92/29/ԵՏՀ հրահանգ՝ «Նավում բժշկական որակյալ ծառայություններին ներկայացվող՝ անվտանգության և առողջության պահանջների մասին» (66): 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 8

Կոմիտեն

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին՝ հավելվածները տեխնիկապես սույն Հրահանգին խստորեն հարմարեցնելու նպատակով՝ այս ոլորտում տեխնիկական առաջընթացի կամ միջազգային կանոնակարգերում, կամ տեխնիկական պայմաններում կատարված փոփոխությունների և նոր արդյունքների լույսի ներքո:

2. Կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները (67)՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

30) Խորհրդի 1992 թվականի մայիսի 21-ի 92/43/ԵՏՀ հրահանգ՝ «Բնական միջավայրերի և կենդանական ու բուսական աշխարհի վայրի տեսակների պահպանության մասին» (68): 20-րդ և 21-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 20

Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

Հոդված 21

1. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (69) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

2. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

31) Խորհրդի 1992 թվականի հունիսի 29-ի 92/59/ԵՏՀ հրահանգ՝ «Արտադրանքի ընդհանուր անվտանգության մասին» (70): 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 11

1. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (71) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 օր:

2. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

3. Սույն ընթացակարգի համաձայն ընդունված ցանկացած միջոց վավեր է երեք ամսից ոչ ավելի: Նշված ժամկետը կարող է նույն ընթացակարգի համաձայն երկարաձգվել:

4. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ, որպեսզի 10 օրից ոչ պակաս ժամկետում իրագործեն սույն ընթացակարգի համաձայն ընդունված որոշումները:

5. Առաջին պարբերության մեջ նշված ընթացակարգի համաձայն ընդունված միջոցների իրականացման համար պատասխանատու անդամ պետությունների իրավասու մարմինները պետք է, մեկ ամսվա ընթացքում, համապատասխան անձանց հնարավորություն տան ներկայացնելու իրենց տեսակետները և պետք է համապատասխանաբար տեղեկացնեն Հանձնաժողովին:

32) Խորհրդի 1992 թվականի սեպտեմբերի 22-ի 92/75/ԵՏՀ հրահանգ՝ «Պիտակավորմամբ և արտադրանքի ստանդարտ տեղեկությունների միջոցով կենցաղային տեխնիկայի էներգիայի սպառման և այլ ռեսուրսների վերաբերյալ նշման մասին» (72):10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 10

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (73) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

33) Խորհրդի 1992 թվականի նոյեմբերի 30-ի 92/578/ԵՏՀ հրահանգ՝ «Եվրոպական տնտեսական համայնքի և ավտոմոբիլային ճանապարհով ու երկաթուղով ապրանքների փոխադրման վերաբերյալ Շվեդիայի Համադաշնության միջև պայմանագիր կնքելու մասին» (74): 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 4

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:
2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (75) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է չորս ամիս:
3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

34) Խորհրդի 1993 թվականի փետրվարի 8-ի թիվ 315/93 (ԵՏՀ) կանոնակարգ՝ «Սննդամթերքում առկա աղտոտիչները կարգավորելու համար Համայնքի ընթացակարգեր սահմանելու մասին»(76):8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 8

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (77) կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն, (այսուհետ՝ «Կոմիտե»):
2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (78) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:
3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

35) Խորհրդի 1993 թվականի փետրվարի 25-ի 93/5/ԵՏՀ հրահանգ՝ «Սննդամթերքին առնչվող հարցերի գիտական ուսումնասիրության ժամանակ Հանձնաժողովին աջակցելու և անդամ պետությունների կողմից համագործակցության մասին» (79): 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 5

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (80) (ԵՀ) կանոնակարգի 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (81) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

36) Խորհրդի 1993 թվականի մարտի 23-ի թիվ 793/93 կանոնակարգ՝ «Առկա նյութերի ռիսկերի գնահատման և վերահսկման մասին» (82): 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

Հոդված 15

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (83) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երկու ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

37) Խորհրդի 1993 թվականի ապրիլի 5-ի թիվ 959/93 (ԵՏՀ) կանոնակարգ՝ «Հացահատիկիային մշակաբույսերից բացի այլ մշակաբույսերի արտադրատեսակների վերաբերյալ անդամ պետությունների կողմից տրամադրվող վիճակագրական տեղեկությունների մասին»(84):12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 12

1. Հանձնաժողովին աջակցում է գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (85) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

38) Խորհրդի 1993 թվականի հունիսի 1-ի 93/23/ԵՏՀ հրահանգ՝ «Խոզաբուծության վերաբերյալ իրականացվելիք վիճակագրական հետազոտությունների մասին» (86):17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 17

1. Հանձնաժողովին աջակցում է Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (87) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

39) Խորհրդի 1993 թվականի հունիսի 1-ի 93/24/ԵՏՀ հրահանգ՝ «Խոշոր եղջերավոր անասունների բուծման վերաբերյալ իրականացվելիք վիճակագրական հետազոտությունների մասին» (88):17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 17

1. Հանձնաժողովին աջակցում է Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (89) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

40) Խորհրդի 1993 թվականի հունիսի 1-ի 93/25/ԵՏՀ հրահանգ՝ «Ոչխարի և այծի գլխաքանակների վերաբերյալ իրականացվելիք վիճակագրական հետազոտությունների մասին» (90):20-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 20

1. Հանձնաժողովին աջակցում է Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (91) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

41) Խորհրդի 1993 թվականի հունիսի 14-ի 93/42/ԵՏՀ հրահանգ՝ «Բժշկական սարքավորումների մասին» (92): 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 7

1. Հանձնաժողովին աջակցում է 90/385/ԵՏՀ հրահանգի 6(2) հոդվածով ստեղծված կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (93) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

4. Կոմիտեն կարող է ուսումնասիրել սույն Հրահանգի կիրարկման հետ կապված ցանկացած խնդիր:

42) Խորհրդի 1993 թվականի հունիսի 14-ի 93/43/ԵՏՀ հրահանգ՝ «Սննդամթերքի հիգիենայի մասին»(94): 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 14

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (95) կանոնակարգի (ԵՀ) 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (96) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

43) Խորհրդի 1993 թվականի հունիսի 24-ի 93/389/ԵՏՀ հրահանգ՝ «Համայնքում CO2 և ջերմոցային գազերի այլ արտանետումների դիտանցման մեխանիզմների մասին» (97): 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 8

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (98) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

44) Խորհրդի 1993 թվականի հունիսի 30-ի թիվ 2018/93 կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Անդամ պետությունների կողմից Ատլանտյան օվկիանոսի հյուսիսարևելյան մասում կատարվող ձկնորսության և որսի վերաբերյալ վիճակագրություն ներկայացնելու մասին» (99): 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 6

1. Հանձնաժողովին աջակցում է Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (100) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

45) Խորհրդի 1993 թվականի հուլիսի 19-ի 93/65/ԵՏՀ հրահանգ՝ «Օդային երթևեկության կառավարման սարքերի և համակարգերի գնման համար համեմատելի տեխնիկական մասնագրերի սահմանման ու օգտագործման մասին» (101):6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 6

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (102) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

46) Խորհրդի 1993 թվականի սեպտեմբերի 21-ի 93/77/ԵՏՀ հրահանգ՝ «Մրգային հյութերի և որոշ նման արտադրանքի մասին» (103): 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 15

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (104) (ԵՀ) կանոնակարգի 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (105) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

47) Խորհրդի 1993 թվականի հոկտեմբերի 29-ի 93/99/ԵՏՀ հրահանգ՝ «Սննդամթերքի պաշտոնական հսկողության վերաբերյալ լրացուցիչ իրավական ակտերի առարկայի մասին»(106):8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 8

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (107) (ԵՀ) կանոնակարգի 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (108) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

48) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի հունիսի 30-ի 94/35/ԵՀ հրահանգ՝ «Սննդամթերքում օգտագործվող քաղցրացուցիչների մասին» (109): 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 7

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (110) (ԵՀ) կանոնակարգի 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (111) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները: 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

49) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի հունիսի 30-ի 94/36/ԵՀ հրահանգ՝ «Սննդամթերքում օգտագործվող ներկանյութերի մասին» (112): 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 5

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (113) (ԵՀ) կանոնակարգի 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (114) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

50) Խորհրդի 1994 թվականի հուլիսի 11-ի թիվ 1734/94 կանոնակարգ՝ «Արևմտյան Ափի և Գազայի հատվածի հետ ֆինանսական ու տեխնիկական համագործակցության մասին» (115): 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

Հոդված 5

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 1488/96 կանոնակարգի (ԵՏՀ) 11-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ միջերկրածովյան հարցերով կոմիտեն (116):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (117) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

51) Խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 2978/94 (ԵՏՀ) կանոնակարգ՝ «Բալաստից նավթի առանձին բաքերում բալաստի հատվածի տարողունակության չափում իրականացնելու վերաբերյալ ԾՄԿ-ի Ա.747(18) որոշման իրականացման մասին» (118): 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 7

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին: Կոմիտեն հանդիպում է Հանձնաժողովի հրավերով այն դեպքում, երբ սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ է համարում :

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (119) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

52) Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 16-ի 94/67/ԵՏՀ հրահանգ՝ «Վտանգավոր թափոնների այրման մասին» (120): 16-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 16

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (121) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

53) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 20-ի 94/62/ԵՀ հրահանգ՝ «Փաթեթավորման և փաթեթավորման թափոնների մասին» (122): 21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 21

Կոմիտեի աշխատակարգը

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (123) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

54) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի դեկտեմբերի 20-ի 94/63/ԵՀ հրահանգ՝ «Բենզինի պահման և բեռնափոխման կայաններից լցակայաններ դրա մատակարարման արդյունքում առաջացող՝ ցնդող օրգանական միացությունների (ՑՕՍ) արտանետումների նկատմամբ հսկողության մասին» (124)[124]: 8-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 8

Կոմիտեն

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (125) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

55) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1995 թվականի փետրվարի 20-ի 95/2/ԵՀ հրահանգ՝ «Սննդային ներկանյութերից և քաղցրացուցիչներից բացի այլ սննդային հավելումների մասին» (126): 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 6

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (127) (ԵՀ) կանոնակարգի 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (128) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

56) Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 2494/95 կանոնակարգ՝ (ԵՏՀ) «Սպառողական գների ներդաշնակեցված ինդեքսների մասին» (129):14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 14

Աշխատակարգը

1. Հանձնաժողովին աջակցում է Վիճակագրական ծրագրերի կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (130) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

57) Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 2597/95 կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Անդամ պետությունների կողմից Ատլանտյան օվկիանոսի հյուսիսարևելյան մասից բացի որոշ այլ մասերում կատարվող ձկնորսության և որսի անվանական վիճակագրություն ներկայացնելու մասին» (131): 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 5

1. Հանձնաժողովին աջակցում է Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (132) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

58) Խորհրդի 1996 թվականի մարտի 19-ի 96/16/ԵՀ հրահանգ՝ «Կաթի և կաթնամթերքի վիճակագրական հետազոտությունների մասին» (133): 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 7

1. Հանձնաժողովին աջակցում է Գյուղատնտեսության ոլորտի վիճակագրության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (134) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

59) Խորհրդի 1996 թվականի հունիսի 20-ի թիվ 1257/96 կանոնակարգ (ԵՏՀ)՝ «Մարդասիրական օգնության մասին» (135):17(1) և (2) հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

60) Խորհրդի 1996 թվականի հուլիսի 23-ի 96/48/ԵՀ հրահանգ՝ «Անդրեվրոպական արագընթաց երկաթուղային համակարգի համատեղ օգտագործման հնարավորության մասին» (136):21-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 21

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (137) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

4. Կոմիտեն կարող է քննարկել անդրեվրոպական արագընթաց երկաթուղային համակարգի համատեղ օգտագործման հնարավորության հետ կապված ցանկացած խնդիր:

5. Կոմիտեն հարկ եղած դեպքում կարող է ստեղծել աշխատանքային խմբեր՝ իր խնդիրների իրականացման գործում իրեն աջակցելու համար, մասնավորապես՝ համակարգելով լիազոր մարմինների աշխատանքը:

6. Կոմիտեն ստեղծվում է սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո:

61) Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24–ի 96/61/ԵՏՀ հրահանգ՝ «Աղտոտումը համատեղ կանխելու և վերահսկելու մասին»(138): 19–րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 19

Կոմիտեի աշխատակարգը

1. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (139) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8–րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

62) Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 27–ի 96/62/ԵՏՀ հրահանգ՝ «Մթնոլորտային օդի գնահատման և կառավարման մասին» (140): 12–րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 12

Կոմիտեն և իր գործառույթները

1. 4(2) հոդվածում նշված չափորոշիչները և մեթոդները գիտական ու տեխնիկական առաջընթացին հարմարեցնելու համար կատարվող անհրաժեշտ փոփոխություններն ու 11–րդ հոդվածի համաձայն տրամադրված տեղեկությունները փոխանցելու մանրամասն միջոցառումները և 4(3) հոդվածում նշված դրույթներով սահմանված այլ խնդիրներ ընդունվում են սույն հոդվածի 2–րդ պարբերության մեջ սահմանված ընթացակարգին համապատասխան: Նշված հարմարեցումը սահմանային արժեքները կամ զգուշացման շեմերն ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոփոխելու ազդեցություն չպետք է ունենա :

2. Կոմիտեն աջակցում է Հանձնաժողովին:

3. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (141) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

4. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

63) Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1996 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 2232/1999/ԵՀ կանոնակարգ (ԵՀ)՝ «Սննդամթերքների մեջ օգտագործված կամ օգտագործման ենթակա համային հավելումների համար Համայնքի ընթացակարգը սահմանելու մասին (142):

ա) 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 7

1. Հանձնաժողովին աջակցում է թիվ 178/2002 (143) (ԵՀ) կանոնակարգի 58-րդ հոդվածի համաձայն ստեղծված՝ Սննդի շղթայի և կենդանիների առողջության հարցերով մշտական կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (144) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

բ) Ուժը կորցրած ճանաչել 8-րդ հոդվածը :

64) Խորհրդի 1996 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 2258/96 կանոնակարգ (ԵՀ)՝ «Զարգացող երկրներում վերականգնման և վերակառուցման գործողությունների մասին» (145):7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

Հոդված 7

1. Հանձնաժողովին աջակցում է Աշխարհագրական հարցերով համապատասխան կոմիտեն (այսուհետ՝ «Կոմիտե»):

2. Այն դեպքում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ (146) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

